H. PALAKACHIAN, Directeur - Rédacteur
de la Revue Hébdomad. „MÉGHOU„
171, Rue Kabristan, Péra, CONSTANT/PLE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Թուրքիա՝ տարեկան 250, վեցամսեայ 125 ղր.
Եւրոպա՝ — 60 ֆրանք.
Ամերիկա՝ — 3 Տոլար.

صاحب و مدیر مسئولی هوونان پالاقاشیان
استانبول بك اوغلی قبرستان سوقاق نومرو ۱۸۱

Արտօնատէր, Խմբագիր եւ Պատասխ. Տնօրէն՝
Յ. Գ. ՓԱԼԱՔԱՇԵԱՆ
Կ.ՊՈԼԻՍ, Բերա, Գերեզմանատան փողոց, թիւ 171

مغو

# ՄԵՂՈՒ

Ա. ՏԱՐԻ
Թիւ 6
1927
ՅՈՒԼԻՍ 7
Հատը 5 ղրուշ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ.
Տողը 10 ղրուշ.
Չտպուած գրութիւնք չեն վերադարձուիր:
Հատը 5 ղրուշ.

Կը հրատարակուի ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը

«ՄԵՂՈՒ» խորին յարգանօք եւ երախտագիտութեամբ կ'ողջունէ

ԹՈՒՐՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԿԱԶԻ ՄՈՒՍՏԱՖԱ ՔԷՄԱԼ ՓԱՇԱՆ

իր բարեբաստիկ այցելութեանն առթիւ ի Պոլիս:

## ԽԻՍՏ ԿԱՐԵՒՈՐ

Տեղապահին եւ Մոստիչեան Վարչութեան գործած կարգ մը ապօրինի եւ պարսաւելի արարքներն քննութեան ներքեւ են այս պահուն:

Անշուշտ կը քննուին միայն այն արարքները, որոնք մատնանշուած են իրազեկներու կողմանէ. չկա՞ն արդեօք ծածուկ մնացած ապօրինաւորութիւններ եւ չարաշահութիւններ ալ որոնք չեն քննուիր, վասն զի չեն յայտնուած եւ ուղղակի ամբաստանութեան նիւթ չեն կազմած:

«Ժամանակ»ի մէջ այս կարեւոր խնդիրը կը յուզէ արտգաւ ազգային մը, Պ. Միսաք Մալումեան, որ կը յիշեցնէ բարենպաստ հաստատութեանց բաժնուելու համար Գ. Էֆ. Գայսէրլեանի կողմանէ Տեղապահին յանձնուած 340 ոսկիին՝ իր նպատակէն շեղեցուցուիլը, նոյն իսկ Պատրիարքարանի սնտուկին մէջ մուտք չը նշանակուելով: Մալումեան իրաւամբ կը հարցնէ թէ, երբ Պոլսոյ մէջ ներկայ եղող ծանօթ անձի մը ձեռամբ տրուած գումար մը չարաչար կը գործածուի յայտնի համարձակ. «Չի՞ կրնար ըլլալ որ այս չորս ու կէս տարուան շրջանին, արտասահմանէն զանազաններէ եկած գումարներն եւս տոմարներուն մէջ նշանակուած չըլլան եւ իրենց նպատակէն շեղած ըլլան: Այս կէտերն ո՛վ պիտի ստուգէ:»

Ահա՛ ամենակարեւոր խնդիր մը, լուրջ նկատառութեան արժանի: Պ. Մալումեան կը թելադրէ կոչ ուղղել արտասահմանի Հայութեան, «Որպէս զի այս չորս ու կէս տարուան ընթացքին ո՛վ ի՛նչ նպատակի յատկացուելու համար դրամ ղրկած է Պատրիարքարանին, հաճի իմացընել Քննիչ Յանձնաժողովի ցոյց տուած հասցէին:»

ՄԵՂՈՒ պատրաստ է հրատարակելու արտասահմանէն ըլլալիք յայտնութիւնները, դիւրացնելու համար քննութեանց ընթացքն: Ուստի այս նպատակաւ կը խնդրենք արտասահմանի բոլոր Հայ թերթերէն՝ արտագրել ներկայ հատուածը, թերթիս հասցէով միասին: Անով իրենք ալ օժանդակած պիտի ըլլան զեղծումներու, չարաշահութեանց յայտնութեան գործին: Այս յայտնութիւնները կարեւոր են ո՛չ միայն անոր համար որ Աւետարանին խօսքը պէտք է տեղը երթայ թէ «Չկայ ծածուկ բան մը որ չը յայտնուի», ո՛չ միայն անոր համար որ չարիք գործողը պէտք է պատժուի, ո՛չ միայն անոր համար որ բարեգործութեան յատկացուած դրամներ չարաչար գործածողները պէտք է հրապարակաւ նախատ ըլլան, այլ եւ անոր համար որ ուրիշներ խրատուին, վախնան արդարութենէ եւ չի համարձակին իրենց վստահուած պաշտօնին մէջ չարաշահութեամբ զեղծանել:

Յ. Գ. Փ.

## ԶԵՂԾՈՒՄՆԵՐՈՒ ՇԱՐՔԸ

### ՈՐՈՆՔ ՉԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻՐ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԵՆԵՐՈՒ ՀԱՄԱԿԻՐ ԹԵՐԹԻՆ ՄԷՋ

*Անցեալ Դշ. օր Ազգ. Ընդհ. Ժողովը գումարուեցաւ նորընտիր Պատրիարք Նարոյեան Սրբազանի նախագահութեամբ եւ լսեց զեղծումներու եւ ապօրինութեանց Քննիչ Յանձնաժողովին Տեղեկագիրը, որ կը հաստատէ Տեղապահին եւ Մոստիչեան Վարչութեան գործած պարսաւելի արարքներն ու պատասխանատուութիւնը:*

*Ահաւասիկ նոյն Տեղեկագրին կարեւոր կէտերը.*

*1. Քաղ. Ժողովին 8—9 անդամներ ունեցած ժամանակ, 2—3 անդամներով ապօրէն որոշումներ տրուիլը:*

*2. Բազմաթիւ կարեւոր որոշումներ տրուած են, միմիայն 4—5 անդամակիցներու ներկայութեամբ:*

3. Մինչեւ 1926ի սկիզբները, արտակարգ տուրքին միջոցներ ի գործ դրուած ըլլալը։

4. 1925ին Մուսիչեան Վարչութեան ասած որոշման համաձայն, Տեղապահը չի ճանաչեր Պատրիարքական ընտրութեան եւ երբ այս անգամ Քննիչ Յանձնաժողովին այս մասին հարցում կ՚ուղղէ իրեն, «յիշողութիւնէս վրիպեր է» կը պատասխանէ ամենայն պաղութեամբ։

5. Տնտես. Խորհուրդին պատրաստած 15000 ոսկիի պիւտճէն՝ Տեղապահ եւ Վարչութիւն 18000 ոսկիի կը բարձրացնեն եւ այսպէս ալ կը գործադրեն, առանց բատ օրինի վերստին Տնտես. Խորհուրդին քննութեան յանձնելու խնդիրը։ Նոյնն ըրած են նախորդ Խնամատարութեան Տնօրէն Տօք. Կորեկեանի կողմէ, պաշտօնէից բաշխուած 3000է աւելի ոսկիները, ինչպէս նաեւ զաւառի եկեղեցիներու գոյքերուն վաճառման գործին մէջ, Տնտես. Խորհուրդէն զաղտուկ։

6. Ազգին բացարձակ մէկ իրաւունքը եղող 10000 (բատ ամբաստանողին 80000) ոսկին գանձելու համար 5600 ոսկի ծախք ըրած ըլլալը։

7. Բարեգործական հաստատութեանց սահմանուած 540 ոսկիի գումար մը՝ Տեղապահ Սրբազանին կողմանէ Թերթերու եւ Պատրիարքարանի մէկ երկու պաշտօնեաներու նուէր տրուիլը։

8. Նախորդ Խնամատարութեան գործերն, 1924էն ի վեր, առանց Վարչական Ժողովի, կամայական գործունէութեան ենթարկուիլը։ Նաեւ, առանց Վարչական որոշման, նոյն Խնամատարութեան հաշուեյարդարութեան ենթարկուիլը, մէջտեղը սակաւին 540 գաղթական եւ 600է աւելի գաղթական աղաքներ եւ որբեր գտնուած ժամանակ։

9. Մուսիչեան Վարչութիւն եւ Տեղապահ՝ Կալուածոց Մնտուկէն 1100 անգլ. ոսկիի անհարկի փոխառութիւն մ՚ընել կ՚որոշեն, եւ յետոյ այս 1100ին տեղ 1460 անգլ. ոսկի կը տրուի, առանց ատենագրութեան մէջ արձանագրուելու եւ առանց որ եւ է օրինական ապահովութեան միջոցներն ի գործ դրուելու։

10. Մինչդեռ Թօքատլեանի հետ կնքուած նախորդ պայմանագրութեամբ, պանդոկին 100,000 ոսկի արժող կարասիները 10 տարի յետոյ Ազգին պիտի մնային, ի վերջոյ կը ջնջուի նոյն օրինաւոր պայմանագրութիւնը եւ Ազգը կը զրկուի նոյն կարասիներու վրայ ունեցած իրաւունքէն։

*
* *

Գալով Թօքատլեանի ներկի խնդրոյն, Քննիչ Յանձնաժողովը կը հաստատէ թէ եղած գործողութիւնը բացարձակապէս ապօրինի է։

Ուրիշ զարմանալիքներ։ Քննիչ Յանձնաժողովը կը չեշտէ թէ,

Ա. 1924 Յուն. 1ին պայմանաժամը լրացած 15 տարուան պայմանագրութեան՝ վարձակալին պատկանող օրինակը, որ պէտք էր Կալուածոցին քով գտնուէր, անյայտ եղեր է։

Բ. 15 տարուան պայմանագրութեան շրջանին 11րդ տարին, Թղթադրամի եւ ոսկիին գրամի տարբերութիւնը դարմանելու համար չինուած չորս տարուան պայմանագրութիւնը կորսուեր է։

Գ. Մկրտիչ Թօգաթլեանի հետ փոխանակուած պայմանագրութիւնը ջնջուած է, առանց մէկուն գիտակցութեանը։

Դ. 15 Սեպտ. 1124ին Տեղապահին եւ Պ. Մէտօվիչի միջեւ փոխանակուած եւ պաշտօնապէս վաւերացուած եւ արձանագրուած պայմանագրութիւնը, որ այժմ ի զօրու է, մէկ ու կէս տարի ծածուկ պահուելէ վերջ, 1926 Յունվարին Վարչութիւնը որպէս թէ կ՚իմանայ եւ իրար անցնելով, Ազգին վնասակար եւ վտանգաւոր այդ կացութեան իբր թէ դարման մը տանելու համար, սակրման սակ կ՚ընդունի ներկի եւ լոգարաններու պայմանագրութիւնները կնքել, որով 161,000 ոսկիի վնաս մը կ՚ենթարկուի Ազգը։

Ահա՛ այս արուչ եւ բացայայտ աւելաներով Քննիչ Յանձնաժողովը եզրակացուցած է թէ, Տեղեկագրին մէջ որոշապէս մատնանշուած կէտերուն համար Մուսիչեանն Վարչութեան գործունէութիւնը ազգ. հիմնական օրէնքներուն բոլորովին հակառակ է եւ հեռացուցած պատուաւէրի · իսկ Տեղապահ Սրբազանին նկատմամբ անհանդուրժելի ... խնդիրներ զտած է իրաւացի։

Ահա՛ Ազգ. Ժողովի երեք Նախաքննիչ դիւաններու անդամներէն կազմուած եւ իրր հոգիէ բաղկացած Քննիչ Յանձնաժողովի տեղեկագիրը, որ, մանրակրկիտ քննութիւններէ եւ ամբաստանեալներու բացատրութիւնները լսելէ յետոյ, խղճամտութեամբ պատրաստուած եւ միաձայնութեամբ ստորագրուած է հետեւեալներէն.

Տ. Յուսիկ Քհ. Թադէոսեան եւ Տեարք Սարգիս Էմմէրեան, Լութֆիկ Գույումճեան, Եդուարդ Շիրինեան, Խաչիկ Սվաճեան, Միսաք Նալբեան, Պետրոս Ասրունի, Յովհ. Խազզալեան, Մաքսուտ Պապաեան։

*
* *

Քննիչ Յանձնաժողովի անդամներէն Սարգիս էֆ. Էմմէրեան, Տեղեկագրին սոյն եզրակացութեան ներքեւ մասնաւորապէս աւելցուցած է թէ, «Ինչպէս որ Յանձնաժողովին Թօքատլեանի ամբողջ գործառնութեանց առթիւ Մուսիչեան Վարչութիւնը, իր Ա. Նախագահովը մէկտեղ պատասխանատու նկատած է», նոյնպէս ինքն պատասխանատու կը նկատէ նաեւ Կալուածոցի Իրաւաբէտ-խորհրդական Պաղտիկ էֆ. Սինանեանն ալ, «նոյն գործառնութեանց համար առանց բացառութեան»։

«Նոյնպէս, կ՚աւելցնէ Էմմէրեան էֆ., Ազգ. Խնամատարութեան դրամներուն կամայական բաշխումներուն, եւ մանաւանդ իրեն համար 600 ոսկի գանձելով՝ Խնամատարական Մնտուկին 3000 ոսկիէ աւելի վնաս մը պատճառելուն համար, նախորդ Տնօրէն Տօք. Կորեկեանը պատասխանատու կը նկատեմ, ինչպէս որ Մաղաքեան Վարչութեան եւ Տնտես. Խորհրդոյ Քննիչ Յանձնաժողովները թէ՛ Պ. Սինանեանը եւ թէ Տօք. Կորեկեանը պատասխանատու նկատած են։»

---

## ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԸ

ՎԻԷՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ վարժարանի Նախակրթարանի բաժնին այս տարուան շրջանաւարտ պարոններն են.

Պ. Պ. Ռուբէն Ռուբէնեան, Սեդրակ Զընկըրեան, Կարպիս Ճիլանեան, Կարպիս Չիւրիւքճիեան, Նուպար Մուրատեան, Յակոբ Ազարեան, Շահան Հազեան, Գրիգոր Յակոբովիչ, Պօղոս Ռեիզեան, Նազարէթ Պօղոսեան, Բարսեղ Կէօնեան, Ժիրայր Գարապանճեան, Հրանդ Հարոյեան, Արսէն Լազեան, Աբէթ Փորթուգալեան, Եդուարդ Կարապետեան, Գրիգոր Փէշթիմալճեան, Յովսէփ Սօլաքեան, Վաչագան Կեսիկեան, Նուպար Պօսաքեան, Հայկազն Միքայէլեան, Ժիրայր Մինենեան, Նուպար Աբէլեան, Լեւոն Աբէլեան, Պերճ Սունուքճեան, Սարգիս Սարգիսեան, Աստուածան Շահեան, Ժիրայր Աւետիսեան, Նազարէթ Փապուճեան։

*
* *

ՊԷՉԱՃԵԱՆ Վարժարանի (Պաքըրքէօյ) ամավերջի հանդէսը տեղի ունեցաւ Կիր. օր։ Հիմն. Տնօրէն Պօղոս Էֆ. Պէզազեան պարզեց վարժարանին անցեալ եւ ներկայ վիճակը։ Վարժարանին Թրքերէնի ուսուցիչ Սմիթեան Էֆ. Կուրտիկեան գեղեցիկ բանախօսութիւն մ՚ըրաւ Թրքերէն։

Շրջանաւարտք. — Օրիորդք Ազնիւ Քիպարեան, Ասթինէ Քէչեան, Էրիփ Նշանեան, Հմայակ Վարդանեան, Նուարդ Մալխասեան եւ Հերմինէ Փափազեան, որոնք Գայմագամ պէյէն ստացան իրենց վկայականները, համազօր Լիսէի վկայականներու։ Գայմագամ պէյն ալ բանախօսելով, շնորհաւորեց Տնօրէնութիւնը, ձեռք բերուած յաջողութեան համար։ Զարդարեան Եղբարք գրենական նուէրներ ըրին շրջանաւարտներուն։

*
* *

ՏԻԳԱՐ ԿՐԹԱՐԱՆԻ (Սուլթանեան Գաւառ գիւղ) ամավերջի սիրուն հանդէսը տեղի ունեցաւ Կիր. օր, նորաշէն Մինէմայի սրահին մէջ։ Վարժարանին այս տարուան շրջանաւարտներն են, Օրիորդներ՝ Արշալոյս Բամպուքճեան եւ Նուարդ Տիլսիզեան, եւ Պարոններ՝ Յակոբ Լութֆեան, Վարդան Էնիմալեան, Ժիրայր Անեմեան, Ժիրայր Մերտինեան եւ Գարեգին Միքայէլեան։

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## Քանի մը ցիրուցան տապանագիրեր Վենետիկեան Միխիթարեան Հայրերու

### Ա.

Գիտէք որ Կոստանդնուպոլսի զանազան գերեզմանատուններուն մէջ բաւական թուով թաղուածներ կան Վենետիկեան Մխիթարեաններէս. յաւով ասոնց հանգստարանները գտնելու՝ ճամբայ ելայ և քայլերս ուղղեցի նախ ազգային գերեզմանատունը Բանկալթիի։

Տխո՜ւր երևոյթ, լաւ է կոչել զայն չանմարան քարակոյտերու քան գերեզմանատուն։

Պզտիկուց՝ որ է ըսել ասկէ իբր 45 տարի առաջ՝ կ'այցելէի սոյն գերեզմանատունս. ծառազարդ էր, ամէն տապանաքար իր տեղը, ծաղիկներով պճնուած, ամբողջութիւնն իր մէջ ունէր խորհրդաւորութիւն մը, որ կը ստիպէր այցելուն ծնրադիր աղօթելու ննջեցեալի գերեզմանին վրայ։

Այս բոլորն խանգարուած է ներկայիս։ Աստուա՜ծ իմ, ինչո՞ւ այսքան անգութ են մարդիկ, ինչո՞ւ այսքան հետամուտ անհամեստ ընելու զիրար, նոյն իսկ մահուընէ վերջ։

Մեր նախնիք մարդուս հողազանգուած մարմնոյն աճիւնները ամփոփող գերեզմանը կոչեր են հանգիստ, հանգստարան, դիր հանգստեան, ննջարան, նշանակել ուզելով սոյն բառերով, որ չկայ հանգստութիւն արցունքի ու վշտի այս հովտիս մէջ, ուր լալով կը մտնէ մարդ, լալով ալ դուրս կ'ելլէ, և գերեզմանին մէջ միայն կը հանգստանայ կամ կը հանգչի վաստակաբեկ մարմինն անոր իբրև ի քնարանի, ուստի երեք անգամ կ'օրհնէ գերեզմանը քահանայն ըսելով. «Օրհնեցի և կնքեալ սրբեցի գերեզմանս ծառայիս կամ աղախնոյս Աստուծոյ նշանաւ Սուրբ Խաչիս և բանիւ Սուրբ Աւետարանաւս, և այլն»։ Ցուցնելու համար նաև, թէ բացարձակապէս անձեռնմխելի, անբռնաբարելի և նուիրական է ննջեցեալին գերեզմանը, քահանայն կը կրկնէ անգամ մ'ալ ըսելով. «Անշարժ եղիցի կնիք տէրութեան ի վերայ գերեզմանի ծառայիս կամ աղախնոյս Աստուծոյ մինչև ի գալուստն Քրիստոսի, որ եկեալ միւս անգամ նորոգեսցէ փառօք ի փառս, ամէն»։

Նախնեաց այս սրբոյ ու խիստ պատուէրէն վերջ, որ կը հրամայէ չդպչիլ գերեզմանին մինչև ի գալուստն Քրիստոսի, մի՞թէ զարմանալի մանաւանդ թէ ողբալի չէ՞ տեսնել տակնուվրայ եղած հինաւուրց գերեզմանատուն մը, որ գրեթէ ո՛չ մէկ տապանաքար — ի բաց առեալ Ջուղայեցի Յակոբ Կաթողիկոսինը — մնացած է իր ննջեցեալին հետ, այնպէս որ — եթէ ներելի է ըսել — ամէն տապանագիր կը սուտ վկայելով իր ընթերցողին, թէ Աստ հանգչի այս ոք ննջեցեալն, մինչդեռ իրականութեան մէջ՝ տապանաքարերն ո՛չ միայն վերցուած են իրենց ննջեցեալներու վրայէն, այլ նաև գործածուած իբր սովորական քար շէնքերու շինութեան, մինչև անգամ ագուցուած գերեզմանատան պատերու հիւսուածքին մէջ, ուսկից ցոյց կուտան իրենց Աստ հանգչի տապանագիրը ի գայթակղութիւն տեսնողաց և ընթերցողաց։

Այսպիսի տխուր տպաւորութիւն մը ունեցայ այցելելուս ազգային գերեզմանատունը, ուր շարունակելով շրջագայութիւնս՝ հանդիպեցայ բազմաթիւ տապանագիրներու յարգելի անձնաւորութեանց, արժանի ծնրադրելու և աղօթելու իրենց աճիւնացած մարմիններուն առջև, բայց այս տակնուվրայութեան մէջ, ո՞ւր գտնել անոնց աճիւնացած մարմինները . . .։

Ժամու մը չափ շրջագայելէս վերջ յանկարծ առջևս ելան երեք պատկառելի տապանաքարեր, մէկ դրուած առանձին տեղ մը, երկուքն հեռու անկէ՝ զետեղուած քով քովի, որոնց վրայ նշմարեցի իսկոյն Մխիթարեան Միաբանութեան խաչաձև կնքոյն չորս խորհրդանիշ տառերն Ո. Կ. Վ. Ա., որոնք կը նշանակեն Որդեգիր Կուսին, Վարդապետ Ապաշխարութեան։ Ի տես որոնց լեցուեցաւ սիրտս զեղուն հրճուանքով, իբր թէ հանդիպած ըլլայի գանձի մը. ծալլուեցան ծունկերս ինքնայօժար, ինկայ անոնց վրայ ու մրմնջեցի ի խորոց սրտիս Հոգւոցն հանգուցելոց մաղթանքը, գիտնալով հանդերձ, որ չեն հանգչիր անոնց ներքև իրենց ննջեցեալներն։

Սոյն երեք տապանագրերու ընդօրինակութիւնն յաջորդիւ։

Հ. ԵՓՐԵՄ Ծ. Վ. ԱՊՐՈՅԵԱՆ

---

## ԶԷՅԹՈՒՆՑԻՆԵՐՈՒ ԴԵՂԵՐԷՆ

Զէյթունցիք, Թանչքը (մայասըլ) բժշկելու համար, վայրի կեռասը ջրով եփելով կը խմցնեն։

Հիւանդ մը փսխեցնելու համար, աղի տաք ջուր կը խմցնեն։

Որովայնի որդերը թափելու համար, մեղրի հետ եղեւնասերմ (խօրասանի) կը խառնեն, և գիշերուընէ ծոմ պահելով առաւօտեան դէմ կ'ուտեն։

---

ԿՈՂՈՎ ՄԸ ԵՂԱԿ ին շարունակութիւնը յաջորդ թիւով։

---

## "ՄԵՂՈՒ"Ն

Տեսա՛ր Մեղուն ժրաջան,
Որ միշտ աշխոյժ ու միշտ յուրջ,
Կ'ընէ բիւր խաղ ու շրջան,
Դարձդարձելով մերին շուրջ։

Բայց ան ո՛րքան թեթեւ, ժիր,
Ո՛րքան յորոխտ, քիչ մ'ալ նեստ,
Ջուր նովերէ չի շարժիր,
Քաջ գիտնալով իր արհեստ։

Ան մեղր ունի անուշակ,
Որով լիքն է փեթակն իր,
Ա՛ռ դուն անկէ մեկ ճաշակ,
Համը բերնէդ չի հատնիր։

Այլ թէ ինծմէ կ'ուզես նոր,
Ազնիւ խորհուրդ մը երէ,
Շատ մի դպչիր դուն անոր,
Քեզ չարաչա՛ր կը խայթէ . . .

ԾԵՐՈՒԿԸ

---

## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ՛ ԲԱԺԻՆԸ

### ԲԱՐԵԿԻՐԹ ԱՂՋԻԿԸ

Համրակառքին մէջ. — Արուսեակ պըտոյտի կ'ելնէ մայրիկին հետ։ Որովհետև հեռու տեղ պիտի երթան, հանրակառք կը նստին։ Արուսեակ խելօք մը կը նստի մայրիկին քով։ Կը զգուշանայ ուրիշին զարնուելէ, ուրիշին նեղութիւն տալէ։ Իր փոշոտած կամ ցեխոտած կօշիկները քովը նստողին հագուստին չի քսեր, և հանգարտ՝ փողոցին անցուդարձը կը դիտէ։

Արուսեակ լուռ կը մնայ։ Դուրսը տեսածներուն և ասոր անոր արդուզարդին վրայ խորհրդածութիւն չըներ։ Նաև կը զգուշանայ բարձրաձայն յայտնելէ իր տեսածներէն ինչ որ զինք կը հետաքրքրէ կամ զինք կը զուարճացնէ, և ուղևորութեան ամբողջ ընթացքին՝ կը պահէ իր լռութիւնը։ Երբ հանրակառքէն իջնելու վայրկեանը գայ, ոտքի կ'ելնէ իր մօրը մէկ նշանին վրայ, չի հրեր ուրիշները, և կամաց կամաց վար կ'իջնէ, զգուշանալով ջուր կամ ցեխ ցատկեցնելէ անցորդներուն վրայ։

Արուսեակ բարեկիրթ աղջիկ է։ Գիտէ թէ հանրակառք մը մասնաւորի յատուկ կառք մը չէ, ամենուն մատչելի փոխադրութեան միջոց մ'է, և ամէն ջանք կ'ընէ՝ և ո՛չ մէկը նեղելու, բարձրաձայն խօսելով և խնդալով։

Յ.



# ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆԻ ՄԱՀԸ

Հայ մատենագրութիւնը մեծ և անդարմանելի կորուստ մ'ունեցաւ շաբթուս, յանձին Բիւզանդ Էֆ. Քէչեանի, երիցագոյն անդամին Հայ լրագրութեան։

«ՄԵՂՈՒ»ի վերջին նշ-ի թիւը տպուած էր արդէն, երբ իմացանք թէ Քէչեան, յետ երկօրեայ տաժանելի հիւանդութեան, իր վերջին շունչն աւանդած է Իտալական Հիւանդանոցին մէջ, աղեխափութեան հետեւանօք կատարուած գործողութենէ մը տասը վայրկեան յետոյ։

Բիւզանդ Քէչեան Գում գաբուի Մայր վարժարանին մէջ իր ուսմանց շրջանն աւարտելէ յետոյ, նուիրուած էր խմբագրական ասպարէզին, զոր իր կեանքին մինչև վերջին վայրկեանը չը լքեց, գծելով ու գրելով անընդհատ 47 երկայն տարիներ, գրեթէ կէս դարու մօտ շրջան մը։

Իբր վեց շաբաթ առաջ, մեր «ՄԵՂՈՒ»ի հրատարակութեան ձեռնարկելու օրերուն, իրարու հանդիպեցանք Ղալաթիոյ Պիլլօր փողոցը, — Հայ օրաթերթերու փողոց։ Քէչեան իր շաբաթական յօդուածը կը տանէր Նոր Լուր ին. եւ յօդուած մը կը տանէի Ժամանակի։ Առողջ կ'երեւէր։

— «Երկուքս ալ պատնէշին վրայ ենք, ըսաւ. երկուքս ալ տակաւին կ'աշխատինք, առանց ընկրկելու։»

— Ինչո՞ւ չաշխատինք, երբ առողջ ենք, երբ կրնանք աշխատիլ և օգտակար ըլլալու տենչն ունինք, պատասխանեցի։

Այս խօսքերու փոխանակութեան ատեն, չէի գիտեր թէ աղեխափութեան ախտէն կը տառապէր մերթ ընդ մերթ։

Իր պատուաւոր վիճակն ալ զինքը ձեռնթափ չէր ըրած աշխատութենէ և մինչև իր վերջին շունչն աշխատեցաւ։ Իր վերջին յօդուածը գրելու վրայ էր, երբ մահացու ցաւերը բռնեցին, և յօդուածը կէս մնաց։ Իսկապէս պատնէշին վրայ մեռաւ Բիւզանդ Քէչեան։

Լրագրութեան դերի ըմբռնումի մէջ, որուն հետեւանօք նաև ազգային զանազան խնդիրներու առթիւ, գաղափարի և ուղղութեան տարակարծութիւններ և վէճեր ունեցած եմ յաճախ իրեն հետ, մանաւանդ Արեւելքն և Բիւզանդիոնը խմբագրած ատենը։ Վերջին տարիներս, Տեղապահական շրջանին մասնաւորապէս, իր գրութիւններուն մէջ կը զգուշանար ազգային օրուան խնդիրները շօշափելէ, և կը գրէր բոլորովին չէզոք նիւթերու վրայ։ Անցեալին մէջ իրեն հետ ունեցած տարակարծութիւններս պատճառ մը չէին որ իմ վեր չը հանեմ իր տաղանդն, իր խոր հմտութիւնն և իր խմբագրական անհուն կարողութիւնն, որոնցմով իրաւամբ առինքնած էր ընթերցող հասարակութիւնն։ Ուստի խորին վիշտով կ'արձանագրեմ իր անդարմանելի կորուստն, և ցաւակցութիւնս կը յայտնեմ հանգուցելոյն այրիին՝ Տիկ. Երանուհիին, զաւակացը՝ Տեարց Պարոյր, Արշակ և Աշոտ, և փեսայներուն՝ Տէր և Տիկ. Աւետիս Սարաֆեանի և Տիկ. Մկրտիչ Պարտիզպանեանի և համայն պարագայից։

Յ. Գ. Փ.

* * *

Յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը վայելուչ կերպով տեղի ունեցաւ կիր. օր Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Ամեն. Նարոյեան Ս. Պատրիարք Հօր, ի ներկայութեան նախկին Պատր. Ամեն. Տ. Յովհ. Արշարունւոյ, Սարգսեան, Գազազեան և Խաչատրեան Գեր. եպիսկոպոսաց և ընտիր բազմութեան մը։ Դամբանականը խօսեցաւ Ս. Պատրիարք Հայրը։ Եկեղեցւոյ բակին մէջ եւս դամբանականներ խօսուեցան։ Մարմինն ամփոփուեցաւ Շիշլիի Ազգ. գերեզմանատան մէջ։

# ԵՐԿԱՅՆԱԿԵՑՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

(Շար. 3րդ թիւէն եւ վերջ)

Միշէլ Անժ. 90 տարու եղած ատեն, կ'ըսէր Գոնտիվլիի, իր աշակերտին. «Ո՛րչափ ալ հարուստ եղայ, միշտ աղքատ ապրեցայ»։

Բարրիս Օ'Նէյլ Իռլանտացին, որ 114 տարեկան մեռաւ, միայն գարեջուր խմած էր իր կեանքին մէջ և միշտ բանջարեղէններով սնած էր։ Արեւուն հետ պառկած և արեւուն հետ ելած էր միշտ և հանապազ։

Եղիսաբէթ Տըլօն 107 տարի ապրեցաւ։ Ժան Էֆինկհամ 144 տարեկան։ Երկուքն ալ ո՛չ գինի խմած էին և ո՛չ ուրիշ որեւէ ոգելից ըմպելի։

Բրիզ լը Պասիլը ժողովրդապետ 104 տարեկանին կը գրէր. «45 տարեկանէս ի վեր, ապրած եմ կանաչեղէններով. սոխով, սխտորով և ուրիշ այսպիսի կոշտ բաներով։ Անդադար աշխատած եմ չարաչար։ Օդին խոնաւութիւններէն շատ չեմ ազդուած և կակուղ անկողնի վրայ երբէք չեմ պառկած։ Ո՛չ արիւն առած եմ, և ո՛չ ալ մաքրողական...։ Տակաւին բաւական զօրաւոր կը զգամ ինքզինքս, օրական 2 փարսախ տեղ քալելու համար։»

Ժան Մոլի եւս օրական երկու երեք փարսախ տեղ կը քալէր, 120 տարեկանին։ Այս մարդը խեղճ գիւղացի մ'էր, որ հաց, ապուր և բակլայ միայն կերած էր իր կեանքին մէջ, և խմած էր միայն շանչագինի (սուղու շիրա, piquette) և աւելի յաճախ ջուր։

Անցեալ դարերու մէջ երկայնակեցութեան օշարակ ծախողներու մեծ մասն իրենց յաճախորդներուն միանգամայն կը պարտադրէին բացարձակ չափաւորութիւն։

1730ի միջոցները, Փարիզի մէջ շատ կը գովուէր օշարակ մը, որուն գաղտնիքն ունէր Վիլար անունով մարդ մը։ Աս կ'ըսէր թէ զայն ժառանգած է հօրեղբօրորդիէ մը, որ ապրած է հարիւր տարիէն աւելի և արկածով մը մեռած է։ Վիլար շատ սուղ կը ծախէր իր օշարակը, բայց ամէն յաճախորդի չէր մոռնար ժուժկալութիւն պարտադրելու։ «Իմ ջուրս չազդեր անոնց վրայ որոնք չափաւոր չեն կերուխումի մէջ»։ Եւ արդարեւ, անոնք որ իր ջուրը կ'առնէին և միանգամայն կը չափաւորէին իրենց կերուխումը, կը վերստանային իրենց առողջութիւնը եւ երկայն տարիներ կ'ապրէին։ Վիլար անոնց ալ կ'ըսէր. «Եթէ չէք բժշկուած, յանցանքը ձերն է. ձեր կերուխումը չէք չափաւորած. հրաժարեցէ՛ք այս մոլութենէն և 150 տարի պիտի ապրիք։»

Այս մարդն ահագին հարստութիւն շինեց։ Ամէն մարդ իր օշարակը կ'ուզէր։ Եւ սակայն օր մը, տարրալուծ մը ուզեց գիտնալ թէ ի՛նչ կը պարունակէր այս հրաշալի ըմպելին։ Տարրալուծեց զայն և ուրիշ բան չը գտաւ բայց միայն քիչ մը Սէն գետին ջուրէն, պուտիկ մը քացախով և աղբորակի (կիւհէրչիլէ, salpêtre) հատիկով մը համեմուած։

Օշարակն իր ազդեցութիւնը կը պարտէր՝ հնարչին պարտադրած ժուժկալութեան, ինչպէս նաև սա գլխաւոր իրողութեան. հիւանդները կը հաւատային թէ այդ օշարակով պիտի բժշկուին։ Հաւատք ունենալ՝ էական պայման է, որպէսզի դարման մը ներգործէ։

ուսերուն վրայ կը ծփային. Նուագուն կապոյտ աչեր, փարգապոյն շրթներ և կձեայ ձեռներ ունէր: Անծանօթին հետ աշխուժով կը խօսէր այս կինը:

— Ուրեմն Նորին բարձրութեան հրամանն է . . . կ'ըսէր տիկինը:

— Խակայն Անկլիա դառնալ, և եթէ դուքս Լոնտոնէն մեկնի, ուղղակի գործն անոր իմացնել:

— Իսկ միւս հրահանգներն ո՞ւր են, հարցուց գեղանի ուղեւորուհին:

— Սա տուփին մէջ ամփոփուած են, և Մանշն անցնելու առնենք միայն նոյն տուփը պիտի բանաս:

— Շա՛տ լաւ. իսկ դու ի՞նչ պիտի ընես:

— Ե՞ս. Բարիզ պիտի դառնամ:

— Բայց այն յանդուգն պատանեակը պատմելէն առա՞ջ պիտի մեկնիս, հարցուց տիկինը:

Անծանօթը պատասխան տալու վրայ էր՝ երբ բերանը բանալու միջոցին, տ'Արդանեան որ ամէն ինչ լսեր էր, դրան սեմը վազեց և գոչեց.

— Ահա՛ այն յանդուգն պատանեակն է որ ուրիշները կը պատժէ, և յուսամ որ այս անգամ առաջինին պէս իր ձեռքէն չպիտի փախչի պատժելիքն անձը:

— Զի՞ պիտի փախչի, վրայ բերաւ անծանօթը, իր յօնքը պռստելով:

— Մտածէ՛ անգամ մը, ըսաւ Միլէտին՝ անանկով որ ազնուականը ձեռքը սուրին կը տանէր, մտածէ որ ամենաթեթև յապաղումն ամէն բան կրնայ ի կորուստ մատնել:

— Իրաւունք ունիս, պատասխանեց ազնուականը, ուրեմն դուն քու ճամբադ շարունակէ, ես ալ իմս կը շարունակեմ:



Երիտասարդը սկսաւ նախ մեծ համբերութեամբ փնտռել սոյն նամակն, քսան անգամ գրպանները վեր վար դարձուց, պարկը խառնեց ու խառնեց, քսակը բացաւ ու գոցեց, սակայն երբ համոզուեցաւ որ նամակն անգտանելի է, երրորդ անգամ կատաղութիւնը բռնեց, և քիչ մնաց որ նորէն համեմուած գինի և իւղ գործածելու պէտքը պիտի զգար. վասն զի տեսնելով որ երիտասարդին խելապատակը նորէն կը բորբոքի և պանդոկին մէջ ամէն բան խորտակելու կ'սպառնայ՝ եթէ գիրը չգտնուի, պանդոկապետը խկոյն սուրին մը առեր էր ձեռքը, իր կինն աւելի կոթ մը և իր մանչերն ալ առջի օրուան գաւազաններով զինուած էին:

— Յանձնարարական գի՛րս, կը գոչէր տ'Արդանեան, իմ յանձնարարական գի՛րս, ապա թէ ոչ, անիծի՛ց արդամ, ամենքնիդ ալ պիտի շամփրեմ գրախտապաններու պէս:

Դժբաղդօրէն այս սպառնալիքն ի գործ դնելու արգելք մը կար. երիտասարդին սուրն առջի կռուին մէջ երկու կտոր եղեր էր. այս բանս բոլորովին մոռցած ըլլալով, երբ տ'Արդանեան սուրը պատեանէն հանել ուզեց, ինքզինքը զինուած գտաւ պարզապէս ութը տասը թիզ երկար թուրի կտորով մը, զէնքի կտոր մը զոր պանդոկապետը պատեանին մէջ ուշադրութեամբ զետեղեր էր: Իսկ սուրին ծայրը ճարպիկութեամբ մը պահեր էր, որպէս զի անով շամփուր մը շինէ:

Այս արգելքով իր խորհրդէն ետ չկեցող կենար մեր մոլեգին պատանին, եթէ պանդոկապետը չմտածէր որ ուղեւորին պահանջումը շատ իրաւացի էր:

— Բայց գործը հակինա՛նք, ըսաւ նա իր սուրինը վար իջեցնելով, ո՞ւր է այն նամակը:



— Այո՛, ո՞ւր է նամակը, գոչեց տ'Արդանեան: Նախ՝ ահա՛ իմաց կուտամ քեզ որ այն գիրը Պ. տը Դրէվիլի ուղղեալ է, և պէտք է որ անպրկայ գտնուի, իսկ եթէ չգտնուի՝ գտնել տալու միջոցը գիտէ նա, քաջ գիտէ:

Այս սպառնալիքը պանդոկապետին երկիւղ տուաւ: Թագաւորէն և Պ. կարտինալէն ետքը՝ Պ. տը Դրէվիլի անունը թերևս ամենէն շատ կը յիշուէր զօրականներու և նոյն իսկ ռամիկներու մէջ: Իրաւ է որ հայր ժօզէֆն ալ կար, բայց անոր անունը միշտ կամացուկ մը կ'արտասանուէր, այնքան մեծ էր ալեխառն Բարձրութեան ազդած սարսափը, ինչպէս որ կ'անուանէր կարտինալին մտերիմը:

Ուստի պանդոկապետն իր սուրը մէկդի նետելով, հրամայեց կնոջը որ աւելին կոթը ձգէ, նոյնպէս սպասաւորներն՝ իրենց գաւազանները, և ինքը կորսուած գիրը փնտռել սկսաւ, և ուրիշներուն ալ՝ նոյնն ընելու օրինակ տուաւ:

— Արդեօք այն նամակը մեծագին բան մը կը պարունակէ՞ր, հարցուց պանդոկապետը պահ մ'անօգուտ տեղ հետազօտութիւններ ընելէն ետև:

— Աստուա՛ծ վկայ, կը հարցնես, գոչեց Կասքօնը, որ նոյն նամակին վրայ դրեր էր յոյսն՝ արքունիքը մտնելու համար, իմ բոլոր հարստութիւնս կը պարունակէր:

— Արդեօք Սպանիոյ վրայ մուրհակնե՞ր էին, հարցուց պանդոկապետը մտայոյզ:

— Նորին Վեհափառութեան յատուկ գանձուն վրայ փոխանակագրեր էին, պատասխանեց տ'Արդանեան, որ Թագաւորին ծառայութեան մտնելու . . .



նայ իր սուրին երկաթ մը շինել տալու և անկից Լուվր դարձաւ և իր առջևն ելող առաջին հրացանակիրին հարցուց Պ. տը Դրէվիլի ապարանին տեղը. այս ապարանը Վիէօ-Գոլոմպիէ փողոցը կը գտնուէր, այսինքն տ'Արդանեանի բռնած սենեակին մօտերը. պարագայ մը որ իր ուղեւորութեան յաջողութեան համար բարեգուշակ նշան մ'երեւցաւ իրեն:

Այնուհետև՝ Մէօնի իր ունեցած վարմունքէն գոհ, անցեալին մէջ անզղջ, ներկային վրայ վստահ և ապագային մէջ յուսով լի, տ'Արդանեան պառկեցաւ եւ քաջերու քուն մը քաշեց:

Այն քունը՝ թէև տակաւին գաւառային էր, մինչև առաւօտեան ժամն ինը տևեց, և նոյն ժամուն ելաւ երթալու նշանաւոր Պ. տը Դրէվիլի տունը, անձ մը որ՝ իր հօրը կարծիքով տէրութեան երրորդ մարդն էր:

## Բ.

## Պ. ՏԸ ԴՐԷՎԻԼԻ ՆԱԽԱՍԵՆԵԱԿԸ

Պ. տը Դրուավիլ, ինչպէս որ կ'անուանէր ընտանիքը Կասքօնյի մէջ՝ կամ Պ. տը Դրէվիլ՝ ինչպէս որ վերջապէս կը կոչէր ինքզինքն ի Բարիզ, իրօք տ'Արդանեանին պէս սկսեր էր իր ասպարէզը, այսինքն առանց դրամի, բայց՝ իբր դրամագլուխ՝ ունէր յանդգնութիւն մը, արթնութիւն և խելք մը, որով ամենէն չքաւոր Կասքօն ազնուականն առէպ աւելի շատ կը

Եւ տխնոջ գլխի նշմարով մը բարեւ տալով իր ձին թշտանակեց, մինչդեռ կառքին կառապանն իր ձիերն ուժգին կը մտրակէր: Ուստի երկու խօսակիցներն իրարու հակառակ ճամբայ մը բռնելով՝ դէպ յառաջ արշաւեցին, հեռացան:

— Հէ՛, հայա հաշի՜ւ, գոչեց պանդոկապետը զայրացիր, որուն աչքին առ իր ուղեւորը խոր արհամարհանքի կը փոխուէր, տեսնելով որ առանց վճարելու կը մեկնէր:

— Վճարէ՛ հաշիւը, անպիտա՛ն, գոչեց ուղեւորը՝ ծառային, որ երկու երեք արծաթ դրամ նետեց պանդոկապետին առջեւ, և ինքն ալ իր տիրոջ ետեւէն սկսաւ արշաւել:

— Ա՛հ, վա՛տ, ա՛հ, թշուառական, ա՛հ, չնծուացնուական, գոչեց տ'Արզանեան՝ ինքն ալ ծառային ետեւէն վազելով:

Բայց վիրաւորը շատ տկար էր և մեծ ցնցում մը չէր կրնար տանիլ: Հազիւ տասը քայլ առաւ, ականջները զարնչեցին, գլխու պտոյտ մը բռնեց զինքը, աչքերը մթնեցան, և փողոցին մէջ տեղն ինկաւ, չարունակելով պոռալ.

— Վա՛տ, վա՛տ, վա՛տ:

— Արդարեւ շա՛տ վատ մարդ մ'է եղեր, մրմնջեց պանդոկապետ տ'Արզանեանի մօտենալով, և այս շողոքորթութեամբ՝ խեղճ տղուն հետ հաշտուիլ ուզեց, ինչպէս առակին արագիլն՝ իր երեկոյեան խղունջին հետ:

— Այո՛, ինքը շատ վատ է, մրմնջեց տ'Արզանեան, բայց կինը շատ գեղանի է:

— Ո՞ր կինը, հարցուց պանդոկապետը:



— Միլէտին, թոթովեց տ'Արզանեան, և երկրորդ անգամ մարեցաւ:

— Փոյթ չէ, ըսաւ պանդոկապետը, երկու հոգի կորսուցի, բայց պատուաւորն մնաց. անշուշտ քանի մ'օր եւս կը նստի պանդոկս, և ասով տասն և մէկ սկուդ շահ մը կ'ունենամ:

Ընթերցողը գիտէ որ տ'Արզանեանի քսակին մէջ միայն տասն մէկ սկուդ մնացեր էր:

Պանդոկապետը կը յուսար որ տասն մէկ օրուան հիւանդութեան համար՝ տ'Արզանեան տասն մէկ սկուդ կը վճարէ, սակայն այս հաշիւն քմածին էր: Վասն զի հետեւեալ օրը, առաւօտեան ճիշդ ժամը հինգին, տ'Արզանեան ելաւ, անձամբ խոհանոցն իջաւ, և քանի մը նիւթերէ, զառ՝ որոց ցուցակը մեր ձեռքը չհասաւ, գինի, եղ, խնկունի խնդրեց, և իր մօրը դեղագրին համեմատ՝ օղեղանի մը բաղադրեց, անով իր վէրքերն օծեց, և առանց բժշկի մը օգնութեան՝ կապերը ինքն իրեն փոխեց: Անտարակոյս պոհէմեան օղեղանիին զօրութեամբը, և թերեւս բժշկի պակասութենէն, տ'Արզանեան նոյն երեկոյին իսկ ոտքի ելաւ և հետեւեալ օրը գրեթէ բժշկուած էր:

Բայց երբ պէտք եղաւ այս խնկունին, իւղն ու գինին վճարել, — և այս ծախսը միայն ըրած էր տ'Արզանեան, քանի որ բոլորովին ծոմ պահեր էր, թէև ընդհակառակն՝ դեղին ձին՝ պանդոկապետին խօսքին նայելով՝ հաւանական աւելի բան կերած էր քան ինչ որ կարելի էր ենթադրել իր հասակին համար, — տ'Արզանեան մնացած թաւշէ քսակին հետ տասն մէկ սկուդը միայն գտաւ գրպանին մէջ, իսկ Պ. տը Դրէվիլի ուղղուած նամակն աներեւոյթ եղեր էր:



ծէր նոյն յանձնարարութեան չնորհիւ թէ այս փոքր ինչ յանդուգն պատասխանը տալու իրաւունք ունի:

— Կրո՛ղ, ըսաւ պանդոկապետը բոլորովին յուսահատ.

— Բայց, փոյթ չէ, յարեց տ'Արզանեան ազգային ազատախօսութեամբ. փոյթ չէ, դրամը բանի տեղ չեմ դներ. ինծի համար կարեւորը նամակն էր: Աւելի լաւ էր որ հազար ոսկի կորսնցնէի քան թէ այն նամակը:

Եթէ քսան հազար ոսկի իսկ ըսէր, վտանգ մը չկար, բայց պատանեկան ամօթխածութիւն մը զինքը զսպեց:

Պանդոկապետն՝ որ գիրը չգտնելուն համար ամէն բան տա ու կրողին կուտար, յանկարծ ուշաբերելով գոչեց.

— Այն նամակը կորսուած չէ բնաւ:

— Ա՛հ, ըրաւ տ'Արզանեան:

— Այո՛, այն գիրը գողցած են:

— Գողցա՞ծ, և ո՞վ:

— Երէկուան ազնուական պարոնն առած է: Խոհանոցն իջաւ, ուր կը գտնուէր կրկնոցդ. այն տեղ մինակ մնաց: Գրաւ կը դնեմ որ նամակդ այն մարդն առած է:

— Միթէ կը կարծե՞ս, պատասխանեց տ'Արզանեան, բոլորովին չհամոզուելով. վասն զի նոյն նամակին մասնական կարեւորութիւնն ինքը միայն գիտէր, և չէր կարծեր որ ուրիշ մը անով հետաքրքրուի: Եւ իրօք, այն տեղ գտնուող ծառայ կամ ուղեւոր բան մը չէին շահեր այն թուղթը ձեռք ձգելով:

— Ուրեմն կը հաստատե՞ս, վրայ բերաւ տ'Արզանեան, որ այն աներես ազնուականէն կը կասկածիս:

— Կը պնդեմ որ ստոյգ եմ, շարունակեց պանդո-



կապետ, երբ իմաց տուի անոր որ Ձեր ազնուութիւնը Պ. Դրէվիլի պաշտպանութիւնը կը վայելէ և թէ այն երեւելի ազնուականին ուղղուած նամակ մ'ունիս, շատ անհանգիստ եղաւ, հարցուց թէ ո՞ւր է այն նամակն և անմիջապէս խոհանոցն իջաւ, արդէն գիտնալով որ այն տեղ կը գտնուի կրկնոցդ:

— Ուրեմն, այն է գողս, պատասխանեց տ'Արզանեան. Պ. տը Դրէվիլի պիտի գանգատիմ, Պ. տը Դրէվիլն ալ թագաւորին պիտի գանգատի: Ետքոյ իր գրպանէն երկու սկուդ հանեց վեհապանծ կերպով մը և պանդոկապետին տուաւ, որ՝ գլխարկ ի ձեռին՝ անոր ետեւէն գնաց մինչեւ դուռը: Այն տեղ մեր երիտասարդն իր դեղին երիվարիկը հեծաւ և անվտանգ հասաւ մինչեւ Սէնդ-Անդուան դուռն ի Բարիզ. ուր ձիուն տէրը զայն երեք սկուտի ծախեց, և արդէն աղէկ գին մ'էր, վասն զի տ'Արզանեան չափազանց յոգնեցուցեր էր զայն՝ վերջին կայանէն սկսեալ: Ուստի նոյն իսկ ձիավաճառն՝ որ վերոյիշեալ գնով ծախու առաւ այն ձին, խոստովանեցաւ որ այն տարօրինակ գումարը կը վճարէր մի միայն կենդանիին եզական գոյնին համար:

Հետեւապէս տ'Արզանեան Բարիզ մտաւ իր փոքրիկ ծրարն ուսը զարկած, և մինչեւ իր դրամական չքաւորութեան յարմար վարձու սենեակ մը գտնելը ճամբայ քալեց: Այս սենեակը տեսակ մը վերնայարկ էր Ֆօսուայէօր փողոցին մէջ, Լիւքսէնպուրկի մօտ:

Տ'Արզանեան կանխիկ վճարում մ'ընելով, իր բնակարանն անցաւ, օրն անցուց կրկնոցին և անդրավարտիքին ժապաւէններ կարելով. այս ժապաւէններն իր մայրը քակեր էր Պ. տ'Արզանեան հօր մէկ նոր կրկնոցէն և ծածուկ անոր տուեր էր. յետոյ Ֆէրայլ քարափը գը-

# ՏՈՒՆ, ԴՊՐՈՑ, ԵԿԵՂԵՑԻ

## ԵՐԱԽՏԱԳԷՏԸ՝ ԵՐԱԽՏԱՀԱՏՈՅՑ

Անցեալ Ուրբաթ օր, Յունիս 17, ըստ փափագանաց Մայր վարժարանի սանուց և սանուհեաց, Գում-գափուի Մայր եկեղեցիին մէջ պատարագ ու հոգեհանգստեան պաշտօն կատարուեցան ի յիշատակ Ա. Էգնաեանի և Յ. Թաւշանճեանի, որոնք հոգացած են յիշեալ վարժարանին վերաշինութեան ծախքը։

Եկեղեցական արարողութեանց աւարտումէն ետք, վարժարանի սրահին մէջ, ժուժկալ սեղանի մը շուրջը, վայելչապէս պատուասիրուեցան հրաւիրեալները և մեծարուեցան հոգեկան հաճոյքի անուշ պահերով։

Մեծագոյն հաճոյքը՝ զոր ունեցան ներկայք՝ եղաւ ցուցադրութիւնը սանուհեաց և սանուց ձեռնական աշխատութեանց։ Ասեղնագործութիւն, կար և ձև, գծագրութիւն, կտրատումով համայրական յօրինում՝ իրենց գեղեցիկ նրբակերտ նըմոյշներն ունէին այդ ցուցադրութեան մէջ։

Շնորհաւորելի են Թաղ. Խորհուրդը, Տնօրէնը և ուսուցչական մարմինը այս բնոյթ արդիւնքին համար, և մա՛նաւանդ այն ոգիին համար զոր անոնք աշակերտաց կը ներշնչեն հանդէպ ձեռնական աշխատութեանց։

Ուրիշ ոգի մը, որ կը բղխի դարձեալ վարժարանին դաստիարակութենէն, բեւեռն էր օրուան հանդիսաւոր պաշտամունքին. գնահատում բարերարներու գործին և յարգանք անոնց յիշատակին։ Մտքի և զգացումի կրկնակ հո՛սքն էր զոր վարժարանին ուսանողութիւնն ազնուաբար կը վճարէր բարերարներուն։

Այս արտայայտութիւնը ինչպէս պատուաբեր է վարժարանին աւանդած դաստիարակութեան, նոյնպէս խոստմնալից է նաև ուսանողներու ապագայ գործունէութեան տեսակէտով. երբ անոնք այսօր կը գնահատեն իրենց վայելած բարիքը, վաղը պիտի բերուին հաւանաբար փոխարինել զայն իրենց անձնական միջոցներով. որչա՛փ ալ անձուկ ըլլան այդ միջոցները։ Մանկութեան մէջ արձակուած ծիլերը յառաջացեալ տարիքի մէջ, կը ծաղկին կը պտղաբերին ընդհանրապէս։

Կը կարծեմ, սակայն, թէ երախտագէտ մատաղ սրտերու համար դժուար չէ այժմէն իսկ խունկի պտեղ մը գոնէ նետել բուրվառին մէջ պաշտամունքին զոր կը մատուցանեն անոնք բարերարներու յիշատակին. այդ պտեղը՝ բուրվառէն արտաքոյ՝ պիտի կազմէ յաւամուր մթնոլորտ մը որ՝ ծաւալելով շրջանակէ շրջանակ՝ գեղեցիկ արդիւնքներ պիտի տայ անշուշտ։ Չէ՞ կարելի արդեօք որ Մայր վարժարանին 5-600 սան ու սանուհիներուն մէջ գտնուին գոնէ 100 հոգի որոնք, ամսական դոյզն վճարումով մը, իրենց պաշտպանութեան տակ կրթել դաստիարակել տան աղքատիկ ընտանիքներէ ԵՐԿՈՒ աղայ. հոգ չէ թէ չի կարենան երկրորդական կրթութիւն մը աւանդել անոնց. կրնան, ամէն պարագայի մէջ, Նախակրթական շրջան մը բոլորել տալ, և՝ ի չգոյէ բաւարար միջոցներու, նուազագոյն ծառայութեամբ, կրնան գոնէ անոնց դասական պէտքերը հայթայթել, մօտէն հետաքրքրուիլ անոնցմով, եղբայրական հոգածութիւն մը ցոյց տալ անոնց հանդէպ, քաջալերել, խրատել զանոնք ի հարկին, և՝ հոգիի ու սրտի մտերմիկ յարաբերութեամբ, ազնուագոյն կենցաղի մը օրինակն ու հրապոյրն ընծայելով՝ լեցնել անոնց ընտանեկան դաստիարակութեան խրամատները։

Գիտնապէս ապացուցուած է այսօր թէ բաղձալի կարելիութիւններով կը ծնին շատ մը մարդիկ, և սակայն, առանց ի յայտ բերելու զանոնք կը մեռնին անյիշատակ։ Քիչերու միայն առիթ կը ներկայանայ, նպաստաւոր միջավայրի մէջ, զարգացնելու այս կարելիութիւնները եւ զանոնք ի սպաս դնելու հանուր մարդկութեան կամ համայնքին, որուն կը պատկանին իրենք։

Այսպէ՛ս եղած է՝ օրուան բարերարներէն Յ. Թաւշանճեանի պարագան։

* * *

1875-76 թուականներուն՝ կարծեմ, իբրև դասընկեր, ճանչցած եմ զինքը Հիսար-տիպի Մեսրոպեան վարժարանին մէջ, ի Գում-գափու. Օննիկ Երէցեանն էր անիկա, բարեհամբոյր պղրոցական մը, զգօն, ինքնամփոփ, նոյն իսկ ա՛յնքան երկչոտ որ դասընկերներէն ոմանք կը համարձակէին անհաճոյ կատակներով նեղել զինքը։

Եւ ահա, օր մը, չեմ գիտեր ինչպէս, Նոր Աշխարհ երթալու պատեհութիւնը կ՚ընծայուի այդ պատանեկին։ Ձեռներէցութիւնը, մինչև այն օր թաղուն, այնտեղ ԹԵՒ Կ'ԱՌՆԷ ԻՐ ՄԷՋ, Արևելեան զորգերու առևտրական առաջին տունը կը հիմնէ. կը հարստանայ։

Այնուհետև, իբրև թէ հրահրիչ շունչ մը անցած ըլլար մոխրին վրայէն, որուն տակ թաղուած կը մնային կայծեր, հետըզհետէ կարգաւ երևան կու գան կ՚արծարծուին ի նմա առևտրական գործունէութեան միւս կարելիութիւնները որոնք, ի քուն կ՚սպասէին զարթօնքի զանգակին. արթնամտութիւն, կարգապահութիւն, պարկեշտութիւն, եւն.։

Այսպէ՛ս, ինքնամփոփ, զգուշաւոր, երկչոտ Օննիկ Երէցեանը կը դառնայ մեծահարուստ Յովհաննէս Թաւշանճեանը՝ բարերարի սրտամտութեամբ, յօժարութեամբ ու գործով։

* * *

Որչա՜փ տղաքներ, արդեօք, կը գտնուին հիմա Մայր վարժարանի ներկայ ուսանողներուն մէջ, մաքով անշան, և երևոյթով անարգ, որոնք՝ եթէ քիչ մը հոգածութիւն վայելեն, կրնան նշանաւոր ու յարգելի դառնալ ապագային՝ իրենց բնածին թաքուն կարելիութեանց զարգացումով։

Անոնցմէ գէթ երկուքին՝ զարգացում ստանալու պատեհութիւնը ընծայել, Մայր վարժարանի սան ու սանուհիք թող նըկատեն իրենց համար երախտագիտական գործնական պարտականութիւն մը իբրև յիշատակարան հանդիսաւոր յարգանքին զոր անցեալ Ուր. զովելի կերպով յայտնեցին։

Բարերարներու հանդէպ պարտինք, ի հարկէ, յարգանք. բայց, պէ՛տք է նաև որ, մեր կարողութեան չափով, երախտահատոյց ըլլանք. և մեր շուրջը ծաւալենք մասնիկ մը այն բարիքէն զոր ստացած ենք։

Բարիքի այս ծաւալումին, աներկբայ եմ, սիրայօժար պիտի նուիրուին անոնք որ իրենց սիրտը բուրվառ ըրեր էին, Ուր. օրուան յարգանքի պաշտամունքին. խո՛ւնկ պէտք է դնել այդ ոսկի բուրվառին մէջ, և մշտաբո՛յր պէտք է ընել զայն։ Ասիկա՛ պիտի ըլլայ իրենց արժանիքի դափնին, իբրև պսակը նորածիլ բարերարութեան զոր երևան բերել պէտք է աշխատին։

ՍԵՊՈՒՀ

20 Յունիս, 1927

## ԾԱԽՈՒ ԱԲԱՐԹԸՄԱՆ

Բերա, Թիւնէլէն քիչ մը անդին, Օ-խըրմլիալին դիմացի անկիւնի աբարդըմանը, տակի վաճառատուններով միասին ծախու է։ Դիմել Փալազաչեան Գրատուն, Բերա, Ակթընճը Տայիրէ, Գարբիստան փողոց, Թիւ 171։

## ՇԱԲԹՈՒԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ

ՅՈՒԼԻՍ 7—13

7 + Եշ. Սբ. Թարգմանիչք՝ ՍԱՀԱԿ եւ ՄԵՍՐՈՊ: Առ. քու. Լս. ժ. 2. ր. 55:

8 Ուր. Պահք :

9 Շբ. Ս. Տրդատ, Աշխէն եւ Խոսրովիդուխտ :

10 ✠ Կիր. Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի : Հարսանիք:

11 Բշ. Ս. Կալիստրատոս, 49 վկայք եւ Ղուկիանոս Քհնյ.

12 Գշ. Ս. Զաքարիա մարգարէ :

13 Դշ. Պահք ։

ՏՊԱԳՐ Յ. Գ. ՓԱԼԱՃԵԱՆ